Primacy of the Armenian Apostolic Orthodox Church
of the United Kingdom and Republic of Ireland
His Grace Bishop Hovakim Manukyan, Primate

Saint Yeghiche Armenian Church Parish
Սբ Եղիշէ Հայոց Եկեղեցւոյ Ծուխ

Priest in Charge Rev Fr Nshan Alaverdyan
13b Cranley Gardens, Kensington London, SW7 3BB
Registered Charity No 1173403
Pastoral office t. +44 (0)20 7373 8133 email. info@styeghiche.org.uk
www.styeghiche.org.uk https://www.facebook.com/StYeghiche

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ - SUNDAY BULLETIN

1: Today's Scripture Reading, 30th October 2022 Bulletin 46/2022

Eighth Sunday of the Exaltation of the Holy Cross

ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԿՈՂՄԷ ԵՓԵՍԱՑԻՆԵՐ ԳՐՈՒԱԾ ՆԱՄԱԿԷՆ 1:1-14

Պօղոս, Աստուծոյ կամքով Յիսուս Քրիստոսի առաքեալ, Եփեսոսի մէջ եղած սուրբերուն ու Քրիստոս Յիսուսով հաւատարիմներուն. շնորհք եւ խաղաղութիւն ձեզի Աստուծմէ՝ մեր Հօրմէն, ու Տէր Յիսուս Քրիստոսէ:

Օրհնեա՛լ ըլլայ Աստուած եւ մեր Տէրոջ՝ Յիսուս Քրիստոսի Հայրը, որ Քրիստոսով օրհնեց մեզ ամէն տեսակ հոգեւոր օրհնութիւններով՝ երկնային վայրերու մէջ, ինչպէս անով ընտրեց մեզ աշխարհի հիմնադրութենէն առաջ, որպէսզի մենք իր առջեւ սուրբ եւ անարատ ըլլանք սիրոյ մէջ: Նախասահմանեց մեզ իր որդեգրութեան՝ Յիսուս Քրիստոսի միջոցով, իր կամքին բարեհաճութեան համաձայն, որպէսզի գովաբանենք իր շնորհքին փառքը. անո՛վ ընդունելի դարձուց մեզ՝ Սիրելիին միջոցով: Իրմով մենք ունինք ազատագրութիւն՝ իր արիւնին միջոցով, ու մեղքերու ներում՝ իր շնորհքին ճոխութեան համեմատ. անո՛վ ճոխացուց մեզ՝ ամբողջ իմաստութեամբ եւ ուշիմութեամբ: Գիտցուց մեզի իր կամքին խորհուրդը՝ իր բարեհաճութեան համաձայն, որ իր մէջ՝ առաջադրած էր. որպէսզի ժամանակներու լրումին տնտեսութեան մէջ՝ Քրիստոսով համախմբէ ամէն բան, անոր մէջ միացնէ թէ՛ երկինքի մէջ եղողները, թէ՛ երկրի վրայ եղողները: Անով ստացանք նաեւ ժառանգութիւն մը, նախասահմանուած ըլլալով համաձայն առաջադրութեան անո՛ր՝ որ կը ներգործէ ամէն բան իր կամքին ծրագիրին համաձայն, որպէսզի մենք՝ նախապէս Քրիստոսի ապաւինողներս՝ գովութիւն ըլլանք իր փառքին: Դո՛ւք ալ ապաւինեցաք անոր՝ երբ լսեցիք ճշմարտութեան խօսքը, ձեր փրկութեան աւետարանը, եւ հաւատալէ ետք անոր՝ կնքուեցաք խոստացեալ Սուրբ Հոգիով, որ մեր ժառանգութեան գրաւականն է մինչեւ ստացուածքին ազատագրութիւնը՝ իր փառքին գովութեան համար:

The Epistle of St Paul to the Ephesians 1:1-14;

Paul, an apostle of Christ Jesus by the will of God,
To God's holy people in Ephesus, [a] the faithful in Christ Jesus:
Grace and peace to you from God our Father and the Lord Jesus Christ.

Praise for Spiritual Blessings in Christ

Praise be to the God and Father of our Lord Jesus Christ, who has blessed us in the heavenly realms with every spiritual blessing in Christ. For he chose us in him before the creation of the world to be holy and blameless in his sight. In love he [b] predestined us for adoption to sonship [c] through Jesus Christ, in accordance with his pleasure and will— to the praise of his glorious grace, which he has freely given us in the One he loves. In him we have redemption through his blood, the forgiveness of sins, in accordance with the riches of God's grace that he lavished on us. With all wisdom and understanding, he [d] made known to us the mystery of his will according to his good pleasure, which he purposed in Christ, to be put into effect when the times reach their

Our Aim;
St Yeghiche Armenian Church aims to be the church for the whole community; a place where those who have faith and those who yet to find it or renew it, can come together as a family of God's children; a place where all will be received with tolerance, understanding and friendship.

fulfilment—to bring unity to all things in heaven and on earth under Christ.

In him we were also chosen, having been predestined according to the plan of him who works out everything in conformity with the purpose of his will, in order that we, who were the first to put our hope in Christ, might be for the praise of his glory. And you also were included in Christ when you heard the message of truth, the gospel of your salvation. When you believed, you were marked in him with a seal, the promised Holy Spirit, who is a deposit guaranteeing our inheritance until the redemption of those who are God's possession—to the praise of his glory.

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԸՍՏ ՂՈՒԿԱՍԻ 8:17-21

Որովհետեւ չկայ գաղտնիք մը՝ որ բացայայտ պիտի չըլլայ, ո՛չ ալ պահուած բան մը՝ որ պիտի չգիտցուի ու երեւան չելլէ: Ուրեմն զգուշացէ՛ք թէ ի՛նչպէս կը լսէք. որովհետեւ ո՛վ որ ունի՝ պիտի տրուի անոր, իսկ ո՛վ որ չունի՝ անկէ պիտի առնուի նոյնիսկ ինչ որ ինք կը կարծէ թէ ունի»:

Անոր մայրն ու եղբայրները եկան իրեն, բայց բազմութենէն չէին կրնար մօտենալ իրեն: Անոր լուր տուին՝ ըսելով. «Քու մայրդ ու եղբայրներդ դուրսը կայնած են եւ կ'ուզեն տեսնել քեզ»: Ան ալ պատասխանեց անոնց. «Իմ մայրս ու եղբայրներս անո՛նք են, որ կը լսեն Աստուծոյ խօսքը եւ կը գործադրեն զայն»:

The Holy Gospel of Jesus Christ according to Luke 8:17-21;

For there is nothing hidden that will not be disclosed, and nothing concealed that will not be known or brought out into the open. Therefore consider carefully how you listen. Whoever has will be given more; whoever does not have, even what they think they have will be taken from them."

Jesus' Mother and Brothers

Now Jesus' mother and brothers came to see him, but they were not able to get near him because of the crowd. Someone told him, "Your mother and brothers are standing outside, wanting to see you."

He replied, "My mother and brothers are those who hear God's word and put it into practice."

Ս. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԻՇԱՏԱԿՈՒԹՅԱՆ ՕՐ

Ս. Հովհան Ոսկեբերան Հայրապետը եկեղեցու ամենանշանաւոր ու շնորհալի հայրերից է: Նա ծնվել է 347 թվականին Անտիոքում: Իր ուսումը ստացել է Անտիոքի աստվածաբանական դպրոցում և ճարտասանության մեջ հմտացել Լիբանիոսի դպրոցում: Դեռ երիտասարդ տարիքից իրեն նվիրել է ճգնողական կյանքին: 381 թվականին Մելետիոս Անտիոքացու կողմից ձեռնադրվել է սարկավագ, իսկ 386 թվականին Փլաբիանոսի կողմից՝ քահանա: Այս ընթացքում սքանչելի ու պերճախոս քարոզների շնորհիվ արժանացել է «Ոսկեբերան» տիտղոսին: 398 թվականին, հակառակ իր կամքի, ընտրվում է Կ. Պոլսի պատրիարք և եռանդով ու նախանձախնդրությամբ ձեռնարկում մայրաքաղաքի բարեկարգումը, որ հեռացած էր քրիստոնեական կենցաղից և ապրում էր անբարո ու վեճերով լի կյանքով: Ոսկեբերանը կշտամբում էր ամեն տեսակ անբարոյականություն, ինչի պատճառով էլ իր վրա է հրավիրում Եվդոքսիա կայսրուհու զայրույթը: Սուրբ Հայրապետի դեմ է դուրս գալիս նաև Ալեքսանդրիայի Թեոփիլոս պատրիարքը, որը ձգտում էր Կ. Պոլսի պատրիարք դառնալ: 403 թվականին եկեղեցական ժողովի կողմից, 29 անհիմն ամբաստանություններով, աքսորման հրաման է տրվում, սակայն աքսոր մեկնելու գիշերն այնպիսի ահավոր երկրաշարժ ու հրդեհներ են լինում, որ կայսրուհին նրան ետ է կանչում իր աթոռին:

Հովհան Ոսկեբերանը շարունակում է նույն խստությամբ քննադատել արքունական զեխությունները: Հակառակ ժողովրդի համակրանքին և Արևմտյան եկեղեցու պաշտպանության՝ Արկադիոս կայսրն ու Եվդոքսիա կայսրուհին կրկին նրան աքսորելու հրաման են արձակում: Սուրբ Հայրապետն աքսորվում է Պոնտոս և նահատակվում 407 թվականին Կոմանա քաղաքում: Նրա արտասանած վերջին բառերն են. «Փառք քեզ, Աստված, փառք քեզ, ամեն ինչի համար փառք քեզ»: 438 թվականին սրբի մարմինը մեծ հանդիսավորությամբ բերում և ամփոփում են Կ. Պոլսի Ս. Առաքելոց եկեղեցում: Բազմաժանր է նրա մատենագրական վաստակը՝ մեկնություններ, ճառեր, ներբողներ, թղթեր և այլն, որոնք իրենց բարերար ազդեցությունն են թողել քրիստոնեական մտքի պատմության վրա: Նրա գործերը հայերեն են թարգմանվել իր կենդանության օրոք:

COMMEMORATION OF THE PONTIFF ST. JOHN THE CHRYSOSTOM

The Pontiff St. John the Chrysostom is one of the most prominent and gracious Fathers of the Universal Church. He was born in Antioch, in 347 AD. He has studied in the Theological School of Antioch and has advanced his skills in rhetoric art in the School of Libanios. Since the young age he has led an ascetic life. In 381 AD he has been ordained as deacon by Meletios of Antioch and in 386 he has been ordained as priest by Flavianos. Thanks to his brilliant and eloquent speeches and sermons he has deserved the title "Chrysostom".

In 398 AD he is elected the Patriarch of Constantinople against his will and zealously initiates renovation and reconstruction works of the capital city, which was far from the Christian mode of life and lived immoral life full of conflicts and disputes. Amorality and religious indifference were dominant among the people, the court and the clergy. St. John the Chrysostom condemns and criticizes all forms and manifestations of amorality and for criticism he raises the Queen Eudoxia's anger. The Patriarch Theophilos of Alexandria also, who wished to become the Patriarch of Constantinople, also stands against St. John the Chrysostom. Basing on groundless slander and calumny by the ecclesiastical council held in 403 AD., an order is issued to exile the saint. However, during the night of exile such terrible earthquake and fires happen that the Queen calls the Patriarch back to his residence. St. John the Chrysostom continues to criticize the wrong and immoral mode of life of the court. Ignoring the people's sympathy towards the Patriarch and the protection of the Western Church, the King Arkadios and the Queen Eudoxia again issue an order to exile the saint. The saint is exiled to Pontos and is martyred in the town Komana. His last words are: "Glory to You, God, glory to You, glory to You to for everything." The saint's remains are buried in the Church of St. Apostles, of Constantinople, in 438 AD.

St. John the Chrysostom is the author of many interpretations, speeches, odes, epistles and letters, which have positively influenced on the history of the Christian mind. His works have been translated into Armenian still during his life.

DAILY BIBLE READINGS FOR 2022 According to the Lectionary of the Armenian Apostolic Church

31 Oct	Sts. Stephen Patriarch of Rome, and the Priests, and the Deacons, and the faithful Wisdom 5:1-8; Amos 3:12-15; Ephesians 3:1-10; John 10:11-16
1 Nov	Sts. Aquiphsimeus the Bishop, Joseph the Priest, Ayethalus the Deacon, and Plato the Martyr. Proverbs 8:12-21; Nahum 2:1-7; 1 Timothy 5:17-21; Luke 9:23-27
2 Nov	Ephesians 1:15-2:3; Luke 8:22-25
3 Nov	Sts. Metrophanes and Alexander, patriarchs, and Paul the Confessor, and the scribes Marcian and Marturius. Wisdom 6:22-26; Zechariah 12:6-10; Hebrews 13:7-9; Matthew 4:23-25
4 Nov	Ephesians 2:4-22; Luke 8:40-48
5 Nov	The Holy Archangels Gabriel and Michael and all the Heavenly Hosts Genesis 18:33-19:2; Job 38:4-7; Isaiah 6:1-7; Ezekiel 1:1-20; Hebrews 1:6-14; Mat thew 18:10-14



Safeguarding and Health and Safety issues are taken seriously by Saint Yeghiche Armenian Church, copies of the policy document are available for view, for any related issues please report or contact members of the parish council.

3: This week's message from our Priest in Charge

Մեկնութիւն եւ հոգեւոր պատգամ Աւետարանի այս օրուայ ընթերցուածից.

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն.

«Ծածուկ ոչինչ չկայ, որ չյայտնուի, ոչ էլ գաղտնի բան, որ չիմացուի եւ ի յայտ չգայ: Այսուհետեւ զգո՛յշ եղէք, թէ ինչպէս էք դուք լսում. որովհետեւ ով որ ունի, նրան կը տրուի, իսկ ով որ չունի, եւ այն, ինչ որ նա կարծում է, թէ ունի, կը վերցուի նրանից» (Ղուկ. 8:17-18):

Հաւատակից եւ հայրենակից սիրելինե՛ր,

Որքա՛ն ծածուկ զոհողութիւններ, ողորմութիւններ, սիրոյ գործեր կան, որ չգիտենք, բայց որոնք սերմի պէս շարունակաբար դեռ պտուղ են տալիս: Առաջին դարերում ասում էին. «Արիւն նահատակաց՝ սերմ Եկեղեցւոյ»: Հազարաւորներ անանուն ու անյայտ են մեզ համար, բայց իրենց արեան վկայութիւնն է, որ խօսում է մինչեւ հիմայ:

Տարուայ մէջ մենք մի օր ունենք, որ յատուկ, մասնաւոր խոնարհում եւ օրհնութեան աղօթք ենք բարձրացնում եւ յիշում մանաւանդ մեզ անյայտ, անունները մեզ չհասած, կեանքի մանրամասներով մեզ համար անիմանալի, բայց Աստծոյ համար միշտ կենդանի հոգիներին: Միշտ շաբաթ օրը նշուող այս տօնը կոչւում է **«ՏՕՆ ԱՄԵՆԱՅՆ ՍՐԲՈՑ՝ ՀՆՈՑ ԵՒ ՆՈՐՈՑ, ՅԱՅՏԻՑ ԵՒ ԱՆՅԱՅՏԻՑ»**: Այդ օրը օրհնութեան հեղեղ է բոլոր սուրբերի՝ աշխարհին յաղթած անթիւ-անհամար հրեշտակացած հոգիների սիրոյ շնորհիւ: Ովքե՞ր են սրբերը, եթէ ոչ մեզ պէս միս ու արիւնից կազմուած ու կրքերին ենթակա հողեղէններ, որոնք Հոգու շնորհով սրբագործման ընթացք են ապրում եւ Քրիստոսով յաղթում աշխարհին:

Շատերը գիտեն, որ միաշաբաթ-կիրակին՝ իբրեւ Տիրոջ յարութեան օրը, բացառապէս նուիրուած է Քրիստոսին: Իսկ սուրբերին, որպէս կանոն, յիշատակում ենք եւ տօնում երկուշաբթի, երէքշաբթի, հինգշաբթի եւ շաբաթ օրերին՝ իբրեւ պահքի օրեր ունենալով չորէքշաբթին եւ ուրբաթը: Սրբոց տօնական առաւօտեան ժամերգութիւններին եկեղեցում Տիրոջ առաջ նախ յիշում ենք Եկեղեցու գլխաւոր, ամենայայտնի սուրբերին, ապա եւ՝ այդ օրուայ յիշատակելի սուրբերին: Հաւատացեալներից շատերն են սիրում ձայնաւոր եղանակով հետեւել առաջնորդող եկեղեցականին, երբ ատեանում խաղաղութիւն ենք խնդրում՝ Տիրոջից միասնաբար ***«Տուր մեզ, Տէր»*** աղերսելով: ***«Վասն Սրբուհւոյ Աստուածածնի եւ Յովհաննու Կարապետի, սրբոյն Ստեփաննոսի Նախավկայի»*** յիշելով եւ ապա շարունակելով՝ ***«Վասն սրբոց Քոց առաքելոց, մարգարէից, վարդապետաց, մարտիրոսաց, հայրապետաց, կուսանաց եւ միանձանց»,*** իսկ վերջում Հայաստանեայց եկեղեցու համար իւրահատուկ առաքելութիւն ունեցած սուրբերից ոմանց՝ ամէն անգամ կրկնելով ***«զիսաղաղութիւն Քո տուր մեզ, Տէր»***: Մեր հաշտարարը երկնքի եւ երկրի միջեւ Տէր Յիսուս Քրիստոս է: Փրկչի ետեւից Իր օրինակով Իր եկեղեցին է շարունակում հաշտարար առաքելութիւնը՝ Քրիստոսի խօսքը կեանք դարձրած Իր սուրբերով:

Ընդհանրապէս պատարագը մատուցւում է Քրիստոսի ամբողջ եկեղեցու՝ ե՛ւ ողջերի եւ ննջեցեալների համար: Բայց քանի որ ննջեցեալ սուրբերը մեր Փրկչի պէս յաղթել են աշխարհին, իրենց յիշատակելիս խորանի աջակողմ ենք գալիս՝ ի շեշտադրում այն բանի, որ սուրբերը Քրիստոսի աջակողմում են: Շատերն են ձայնակցում ***«Առաքելոց սրբոց, մարգարէից, հայրապետաց…»***-ից, մինչեւ ***«Միանձնացելոց սրբոց…»*** եւ **«Թագաւորաց հաւատացելոց…»** եւ ապա կարծես հէնց այս տօնի ձեւակերպումով յիշելով բոլորին.***«Ընհանուր բոլոր հաւատացեալների՝ արանց եւ կանանց, ծերերի եւ մանուկների եւ ամենայն չափ ու հասակի հաւատով ի Քրիստոս ննջեցեալների համար թող յիշատակ լինի այս սուրբ պատարագը, աղաչում ենք»:***

Յիշո՞ւմ էք, թէ ինչպէս Աստուած խոստացաւ չկործանել պղծութեամբ լեցուն քաղաքները, եթէ անգամ տասն արդար գտնուի այնտեղ, ինչպէս է Քրիստոս յայտարարում, որ վերջին օրերի տառապանքները, նեղութիւնները կկրճատուեն ընտրեալների պատճառով: Ահա այս ընտրեալներն են, որ մեզ համար բարեխօս են լինում «վայ»-երի դարաշրջանում: Այո, շատ են կանչուածները, թերեւս բոլորին է ուղղուած Փրկչի կանչը, բայց ոչ բոլորն են ընտրեալ դառնում, ոչ բոլորն են բարի մարտի մէջ մինչեւ վերջ մնում՝ հաւատարիմ լինելով Տիրոջը եւ արիւն թափելու աստիճան դէմ կանգնելով մեղքին:

Քրիստոսի երկրորդ գալուստին եւ մեծ դատաստանի օրը իրենք ոչ միայն չեն դատուելու, այլեւ Քրիստոսի հետ գալու են դատելու աշխարհը: Այս կենդանի հոգիները երկնքում անդադար եւ մշտարթուն բարեխօսներ են մեզ համար՝ իբրեւ Եկեղեցու կեանքին մասնակիցներ, որոնց չի մոռանում Եկեղեցին եւ ուրախութեամբ տօնում է նրանց յիշատակը:

Մենք մեր հաւատքի կեանքում՝ բարի պատերազմի մէջ իրենցով պիտի քաջալերուենք, իրենց օրինակով զօրանանք եւ յիշենք Պօղոս առաքեալի խօսքերը. ***«Ուրեմն մենք էլ, որ մեր շուրջը վկաների այսչափ բազմութիւն ունենք, դէ՛ն գցենք ամէն հպարտութիւն եւ ծանր մեղք, համբերատարութեամբ ընթանանք դէպի մրցասպարէզ, որ բացուած է մեր առաջ. նայենք Յիսուսին՝ հաւատի Զօրագլխին, այն Կատարելագործողին, Որն Իր առաջ դրուած ուրախութեան համար յանձն առաւ խաչը, արհամարհեց ամօթը եւ նստեց Աստծոյ աթոռի աջ կողմում»*** (Եբր. 12:1-2):

Չկայ ոչինչ եւ ոչ մի անուն, որ Աստծուն յայտնի չլինի: Չկայ արարք, թաքուն ողորմութիւններ ու բարի գործեր, հսկումներ, աղօթքներ, պահքեր ու ծոմեր, որոնցից Աստուած տեղեակ չլինի: Հոգեւոր կեանքում ցանկացած ջանքի, ճիգի, գործի ու տքնանքի վարձը Աստծուց է պէտք ակնկալել: Իսկ երբ ի ցոյց մարդկանց լինի եւ յաճախ սկսենք թուարկել, որ այս ենք արել, այս կամ այն վաստակն ունենք, պէտք է զգոյշ լինենք, որ վարձից չզրկուենք. ***«ինչ որ նա կարծում է, թէ ունի, կը վերցուի նրանից»:***

Սիրելինե՛ր, յաճախ կարդանք սուրբերի կեանքը, որ վարք կամ վկայաբանութիւն է կոչւում: Վստահ եմ, հոգեւոր նոր եռանդի առիթ կդառնայ այս փորձառութիւնը, որով մենք էլ ամենօրեայ մեր կենցաղի մէջ յաղթող պիտի լինենք Քրիստոսով, ում Հօր եւ Սուրբ Հոգու հետ փառք, յաւիտեանս. ամէն:

Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեան



4: Հոգեհանգիստ - Memorial Service

Repose of the soul service at St Yeghiche Armenian Church is requested:

There is no Memorial Service Request for this Sunday

May the Lord rest the souls of the deceased members of our community in peace and console their loved ones with the comforting power of His Holy Spirit.

Please Pray For Our Sick: Please notify the Pastor whenever you know of anyone who is sick, whether at home or in the hospital. Let us pray for one another

Rev Fr Nshan Alaverdyan is available to visit parishioners in the hospital, nursing homes, or home visitations. He is also available to conduct Home Blessings, administering Holy Communion, consultations and other sacramental needs. Please call the church office at 020 7373 8133 or Fr Nshan at 07548 777 147.

Ձեր ամեն տեսակի հոգեւոր կարիքներուն եւ Խորհրդակատարութիւններուն՝ Տնօրհնէքի, հիւանդի այցելութեան, Սբ Հաղորդութեան ստանալու եւ այլ խնդրանքներուն համար դիմեցէք Եկեղեցի 020 7373 8133, կամ ուղղակի հեռաձայնեցէք **Սբ Եղիշէի Հոգեւոր Հովիւ Տէր Նշան Քահանայ Ալավերդեանի** 07548 777 147:

HOKEHANKIST AND IN LIEU OF FLOWERS

Friends and family of the deceased can make donations, in memory of their loved one, to St. Yeghiche Armenian Church General Operating Fund for prayers or in lieu of sending flowers.

ENQUIRIES:

For ecclesiastical/parish matters including requests for Christenings, Home Blessing (Dnorhnek), Donations in Lieu of Flowers, arrangements for Marriages and other church administrative matters please contact Mr Viken Haladjian, phone: **07970 146 280** or by emailing info@styeghiche.org.uk
Alternatively please approach a member of the Parish Council at church every Sunday after Badarak.

Requiem Service (Hokehankisd)
For Requiem Service (Hokehankisd), please call the administration number at **07970 146280**, or e-mail us your request to info@styeghiche.org.uk by Thursday, in order to include the name(s) of your beloved one(s) in the Sunday bulletin. There is no set monetary amount for requesting Hokehankisd; any amount donated is appropriate and appreciated. **Please remember our Church in your prayers.** *Your kind donations are gratefully*

ANNOUNCEMENT:

St Yeghiche Armenian Church Parish Council would like to invite members of the Armenian community to become registered members and take part in Parish activities. Become a dues paying member and let your voice be heard, be eligible to vote and be elected to one of Parish offices. Please contact a member of the Parish Council at the side entrance desk of the Church or visit our website www.styeghiche.org.uk

We welcomes your donations for prayers and support towards church annual expenses. **May the Lord bless you and your family, keep you away from all harm and fulfil all you prayers and dreams.**

-You may send in your donations as follows: Please post your cheques to: St Yeghiche Armenian Church Parish, *13b Cranley Gardens, Kensington, London, SW7 3BB*. Please make your cheques payable to: ***"St Yeghiche Armenian Church"***.

-You can also pay by bank transfer to St Yeghiche Armenian Church Parish Ltd Account at: HSBC, Acc.no: 42674432, Sort code: 40-02-26, IBAN: GB13HBUK40022642674432, BIC: HBUKGB4106F

-Alternatively you may use our QR Code which will enable you to make donations directly to the Church PayPal account. Please scan this QR Code to make your electronic weekly, monthly or periodical contributions. *Thank you.* **St Yeghiche Armenian Church Parish Council**

PayPal
Scan. Pay. Go.

St Yeghiche Armenian Church is a Registered Charity, Reg No 1173403.
Please complete a Gift Aid Form with your donation. Forms are available from Parish Council.